

«ՄԱ ԵՐԵՎԱՆՆ Է, ԱՅՍՏԵՂ ԴՈՒ ՏԱՆՆ ԵՍ»

Ըստ վիճակագրական տվյալների՝ ՀԴՄ-ների լայնամասշտաբ տեղադրմամբ ու շահող կտրոնների գայթակղությամբ պայմանավորված, երկրում աճել է մանրածախ ապրանքաշրջանառությունը: Սակայն փոքր օբյեկտների տերերն ու աշխատակիցները համառորեն շարունակում են դժգոհել, որ իրենք հազիվ են «յուլա գնում», ուստի անհրաժեշտ ծավալի հաշվառում չեն կարող իրականացնել, եւ ՀԴՄ-ով աշխատելն այդ պարագայում դառնում է նրանց համար անհնարին:

«Փոքր օբյեկտները չպետք է մեծերի իրական շրջանառությունը պարտակողների դեր ստանձնեն. ներկրված կամ տեղում արտադրված ապրանքների ամբողջ շղթան պետք է վերահսկվի, որպեսզի պատկերացում կազմվի երկրի ողջ շրջանառության մասին: Միթե մեր կենցաղում հաշվառում չի իրականացվում՝ էլեկտրաէներգիայի, գազի, ջրի: Արդյոք կգտնե՞ք որեւէ զառամյալ տատիկ, որն իր բնակարանում էլեկտրական հաշվիչ չունենա միայն այն պատճառով, որ փոքր ծավալի սպառող է: Եթե նման բացառություն թույլատրվի, ապա անմիջապես «հաստատագրված» տատիկի դռնից ու պատուհանից բնակարան կթափանցեն այնպիսի հզոր մալուխներ, որ շատ չանցած կպարզվի, որ մեր երկրի էլեկտրաէներգիայի գերհսկա սպառողները մի քանի տասնյակ նվազ տատիկներ են: Միթե պետք է երկրի ամբողջ առեւտուրը օտարին հանձնենք, որպեսզի ստիպված լինենք ողջ ապրանքաշրջանառությունը պարտադիր կերպով հաշվառել»,- մեր հետ զրույցում ասաց ֆինանսատնտեսական բնագավառի մասնագետ, ՄՊՍ «Միգարոնի» գլխավոր հաշվապահ Ստեփան Երոյանը: *«Առկա ճգնաժամի պայմաններում միայն մայրաքաղաքում ամեն օր տասնյակ խանութներ են փակվում: Մինչդեռ յուրաքանչյուր տարածքի վրա հարյուր հազարավոր դուլարներ են ծախսվել՝ վերանորոգելու, առեւտրատեխնիկական սարքավորումներով հագեցնելու ու կահավորելու համար: Գոնե այս իրավիճակում իշխանությունները փորձեն օրենքը հարգել ու վերացնել փողոցային առեւտուրը: Եւ շատերի՝ աշխատանքից զրկվելն, արդարացում չէ, քանի որ խանութների փակման պատճառով շատ ավելի մեծ թվով մարդիկ են*

դառնում գործազուրկ: Մինչև ճգնաժամը ապրանքը գնում էին եւ՛ խանութից եւ՛ փողոցից, ճգնաժամի ժամանակ գնում են կա՛մ խանութից կա՛մ փողոցից, արդյունքում՝ շատ խանութներ չեն դիմանում անհավասար մրցակցությանը: Իսկ եթե մի երկրում առաջավորը պարտվում է հետադիմականին, նշանակում է՝ այդ երկրում ինչ-որ բան այնպես չէ: Եւ կառավարությունը չպետք է կուլ գնա որոշների ակնհայտ պոպուլիստական մտահոգություններին, թե՛ փողոցային առևտրով շատերի օրվա մի կտոր հացի խնդիրն է լուծվում: Եթե փորձում ես օրենքը խախտելու գնով հարգել փողոցում առևտուր անող տասիկի շահերը, ապա ինքնաստիճանի ոտնահարում ես մեկ ուրիշ տասիկի թոռնիկի սահմանադրորեն ամրագրված աշխատանքի իրավունքը, շատ-շատերին պանդխտության դատապարտում, իսկ որոշներին էլ աննուղակիորեն ուղարկում «կանգնելու» Ստամբուլի փողոցներում», - ասում է մեր զրուցակիցը:

Իսկապես, եթե ամեն ինչին փորձենք արդարացում գտնել, ապա Երևանի մագիստրալային փողոցների մայթերին օրը ցերեկով «էլիտար» վարսավիրանոցների լվացքը չորացնողների համար էլ է հիմնավորում գտնված. «Սա Երևանն է, այստեղ դու տանն ես»:



«Պետք է վճռականություն հանդես բերել,- իրավիճակից մտահոգված՝ ասում է պրն Երոյանը,- անարդյունավետ կիսաքայլերից անցնելով հետեւողական գործողությունների, առաջին հերթին վերացնել փողոցային առևտուրը, բացի այդ՝ կյանքի կոչել այն պարտադիր չափորոշիչները, որի ապահովման դեպքում միայն տվյալ օբյեկտը կարող է առևտրային գործունեությամբ զբաղվել՝ լինի դա սահմանված փաստաթղթաշրջանառության իրականացման հնարավորությունը, թե սանիտարական նորմերի համապատասխանությունը, կամ էլ առևտրի համար անհրաժեշտ պայմանների ապահովումը: Արդյունքում՝ ապրանքաշրջանառության, նաեւ հարկային բեռի գրեթե ողջ ծավալն իրենց վրա կվերցնեն նորմալ առևտուր կազմակերպելու համար անհրաժեշտ պայմաններով ապահովված օբյեկտները, որոնք, բնականաբար, կլինեն նաեւ ավելի վերահսկելի»:

Երևանի որերորդ քաղաքապետը, որ փորձում է վերջ տալ փողոցային առևտրին ու կանոնակարգել բացօթյա առևտուրն ու առևտրի ժամանակավոր օբյեկտների աշխատանքը, ծրագրեր ու միջոցառումների պլաններ են կազմում: Բայց մի քանի ցուցադրական

քայլերից հետո, վճռականությունն ու ոգևորությունը գնալով նվազում է, եւ արդյունքում ունենք այն, ինչ ունենք:

«Սպառողների իրավունքների պաշտպանություն» ՀԿ-ի նախագահ Աբգար Եղոյանն այս մասին ասում է. «Անցած տարիներին այս ուղղությամբ ոչ մի լուրջ քայլ չի ձեռնարկվել՝ ընդունվում էին նորանոր օրենքներ, բայց սպասված փոփոխությունները չէին երեւում: Ես տեղյակ չեմ, թե նորընտիր քաղաքապետարանն ինչ պլաններ ունի, բայց առաջարկս մեկն է՝ վերացնել փողոցային առեւտուրը: Դա ոչ միայն մեր քաղաքի արտաքին տեսքի վրա է ազդում, այլեւ վնասակար է սպառողների առողջության համար, քանզի չեն պահպանվում սանիտարական նորմերը: Չարմանալի չէ, որ քայլերը, եթե նույնիսկ կատարվում են, արդյունք չեն տալիս, որովհետեւ ամեն փողոցային առեւտուր կատարողի մեջքին կանգնած է ինչ-որ պաշտոնյա, օլիգարխ կամ ոստիկան, որն էլ զբաղված է նրանով, որ ընդունված օրենքները չկիրառվեն»:

ԱՐԱՄ ԱՆՏԻՆՅԱՆ